Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոն

«Կանանց իրավունքների պաշտպանություն» ՄԻՊԵԿ-ի առաջին առցանց դասընթաց (վեբինար)

2015թ.-ի ապրիլի 29-ին ՄԻՊԵԿ-ն անցկացրեց «Կանանց իրավունքների պաշտպանություն» խորագրով իր առաջին առցանց մասնագիտական դասընթացը կամ այսպես կոչված վեբինարը: Առցանց դասընթացի մասնակիցները նախնական գիտելիքներ ստացան ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (ԿԽՎԿ) դիմելու կարգի և ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողի գործունեության մասին: Դասընթացը նախատեսված էր կանանց իրավունքների ոլորտում մասնագիտացող և Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) հայցադիմումներ ներկայացնելու փորձ ունեցող իրավապաշտպան-իրավաբանների համար: Դասընթացի նպատակն էր մասնակիցներին խորացված գիտելիքներ հաղորդել միջազգային մակարդակով դատավարությունների միջոցով կանանց իրավունքների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների վերաբերյալ: Մասնակիցներից շատերն արդեն համագործակցել են ՄԻՊԵԿ-ի հետ ՄԻԵԴ հայցեր ներկայացնելու ոլորտում, սակայն դեռևս քիչ փորձ ունեն ԿԽՎԿ և ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողին դիմելու ոլորտում:

> *"Thank you for inviting me and arranging the webinar. It was my pleasure to join you yesterday! The webinar is such a good idea, so I hope it will become EHRAC's new tradition and a useful tool in your work"*
>
> Anahit Simonyan, Project Researcher at Democracy Today NGO, Yerevan, Armenia.

Դասընթացին մասնակցել են հետևյալ ՀԿ-ների ներկայացուցիչներ՝ «Ժողովրդավարությունն այսօր» և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (Հայաստան), Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա, Ուկրաինայի Հելսինկյան Մարդու իրավունքների միություն, «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոն և Սանկտ Պետերբուրգի «Կանանց հարցերով արագ արձագանքման կենտրոն» (Ռուսաստան):

Առցանց դասընթացի առաջին մասը վարել է ՄԻՊԵԿ-ի ավագ իրավաբան Ջոանա Էվանսը, ով մասնակիցներին ներկայացրել է ԿԽՎԿ-ի հետ համագործակցելու կարգը, մասնավորապես՝ անհատական հայցերի դիտարկման կառուցակարգը (մեխանիզմ): Դասընթացի երկրորդ մասը վարել է «Բրիք Քոթ Չեմբերս» փաստաբանական պալատի փաստաբան և ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողի նախկին խորհրդատու Ջենիֆեր Մակլեդը, ով ներկայացրել է գործող Հատուկ զեկուցողի պրոֆեսոր Ռաշիդա Մանջուի լիազորությունները և գործունեությունը: Բոլոր ներկայացումներից հետո ժամանակ է հատկացվել քննարկման առարկա դարձած հարցերի վերաբերյալ հարց ու պատասխանի համար: Առցանց դասընթացը եզրափակվել է բաց քննարկմամբ, որի ընթացքում մասնակիցները հարցեր են ուղղել գործնականում ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողի հանձնարարականների կատարման և ներպետական օրենսդրության մեջ դրա արդյունքում կատարված կոնկրետ փոփոխությունների օրինակների վերաբերյալ:

Առցանց դասընթացի էկրան՝ ինչ տեսան դասընթացի



ՄԻՊԵԿ-ը որոշել է առցանց դասընթացներ անցկացնել՝ մեր թիրախային տարածաշրջանում մեր կարողությունների զարգացման ռեսուրսների

հասանելիությունը առավելագույնս մեծացնելու նպատակով: Այդ իսկ պատճառով մենք մեծ ուրախությամբ ողջունեցինք չորս երկրներից տասնութ մասնակիցներին:

ՄԻՊԵԿ-ի ավագ իրավաբան Ջոանա Էվանսի խոսքով՝ *«Մեր գործընկեր փաստաբանների մասնագիտական ուղղորդումը ՄԻՊԵԿ-ի գործունեության անկյունաքարն է հանդիսանում, և մենք հաճույքով առաջարկում ենք մասնագիտական հարցերի շուրջ հեռակա դասընթացների անցկացման այս նոր ձևը»:*

Դասընթացներն անցկացվել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ Ժողովրդավարության և մարդու իրավունքների գործիքի շրջանակներում: